# ՕԾՎԵՑ ԱԼԱՎԵՐԴՈՒ Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Նոյեմբերի 11-ին, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի, օծվեց Ալավերդու Ս. Գրիգոր Նարեկացի նորակառույց եկեղեցին:

Եկեղեցու շինարարությունն սկսվել էր շուրջ մեկ տարի առաջ, և այս կարճ ժամանակահատվածում Ալավերդու Մանես-Վալեքս լեռնամետալուրգիական կոմբինատի տնօրեն Վալերի Մեջլումյանի հովանավորությամբ ու ժողովրդի աջակցությամբ ավարտվել են տաճարի կառուցման հիմնական աշխատանքները:

Եկեղեցու բարերարի բնորոշմամբ, եկեղեցին այն հարստությունն է, որ մեր ժողովրդին անհրաժեշտ է բոլոր տեսակի արժեքներից առաջ, քանի որ դրանով է պայմանավորված նրա բարոյական ու հոգևոր նկարագիրը և հայրենիքի հանդեպ՝ սերն ու հարգանքը դիմացինի նկատմամբ:

Ձեռամբ Վեհափառ Հայրապետի նախ օծվեց Ս. Սեղանը, ապա Սրբազան Հայրերն օծեցին մկրտության ավազանը, չորս ավետարանիչների ու 12 առաքյալների անունները կրող սյուները: Նորակառույց եկեղեցում մատուցվեց անդրանիկ Պատարագը:

Նորին Սրբությանն իրենց հայրենի քաղաքում դիմավորելու և նրա օրհնությունն ստանալու էին եկել հարյուրավոր ալավերդցիներ ու շրջակա գյուղերի բնակիչներ: Եկեղեցու հանդիսավոր բացմանը ներկա էին ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանը, Լոռու մարզպետ Հենրիկ Քոչինյանը և պաշտոնատար այլ անձինք:

Հավարտ օծման արարողության Հայոց Հայրապետի սրբատառ կոնդակով Վալերի Մեջլումյանին շնորհվեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու բարձրագույն պարգևը՝ «Ս.Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը (Տե՛ս էջ 42): Հայրապետական կոնդակն ընթերցեց Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Մեսրուռ եպս. Չուլջյանը: Օծման արարողության առիթով Վեհափառ Հայրապետը եկեղեցուն նվիրեց նաև Հաղորդության սրբազան սկիհ:

Հոյակերտ այս կոթողի մեջ համադրված են հայ միջնադարյան նշանավոր վանքերի՝ Հաղպատի, Սանահինի և Օձունի ճարտարապետական հորինվածքներն ու լուծումները:

ՀՐԱՖԻՐՈՒՄ ԸՆԿՄԱԾՈՎ